



Համարը ՀՕ-29-Ն

Տեսակը Պաշտոնական
Ինկորպորացիա

Տիպը Օրենք

Կարգավիճակը Գործում է

Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2005.01.21/6(378) Հոդ.102

Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ Ազգային ժողով

Ընդունման ամսաթիվը 14.12.2004

Ստորագրող մարմինը ՀՀ Նախագահ

Ստորագրման ամսաթիվը 13.01.2005

Վավերացնող մարմինը

Վավերացման ամսաթիվը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 22.01.2005

Ուժը կորցնելու ամսաթիվը

+ Կապեր այլ փաստաթղթերի հետ

+ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեություն իրականացնելու և փաստաբանների մասնագիտական միավորում կազմակերպելու հիմունքները և այդ գործունեության իրականացման կարգը:

Հոդված 2. Փաստաբանության մասին օրենսդրությունը

Փաստաբանության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքերից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից:

Սույն օրենքով սահմանված կարգը միասնական է և պարտադիր բոլոր փաստաբանների համար:

Հոդված 3. Փաստաբանությունը և պետությունը

Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:

Փաստաբանությունը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:

Հոդված 4. Սույն օրենքում կիրառվող հասկացությունների օգտագործման սահմանափակումը

Կազմակերպությունների և հասարակական միավորումների անվանումներում «փաստաբան», «փաստաբանների պալատ», «փաստաբանների կոլեգիա», «փաստաբանների միություն» հասկացությունները, դրանց բոլոր հոլովածները կամ օտարալեզու իմաստային թարգմանությունները ներառող բառակապակցությունների օգտագործումը համաձայնեցվում է փաստաբանների պալատի խորհրդի հետ:

Հոդված 5. Փաստաբանական գործունեությունը

Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով:

Փաստաբանական գործունեությունը ներառում է՝

- 1) խորհրդատվությունը, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը, նրանց իրավունքների և պարտավորությունների, դատական համակարգի՝ վստահորդի իրավունքներին առնչվող գործունեության կապակցությամբ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը.
- 2) ներկայացուցչությունը, ներառյալ՝ դատական ներկայացուցչությունը.
- 3) քրեական գործերով պաշտպանությունը:

Սույն հոդվածով նախատեսված դատական ներկայացուցչությունը կամ քրեական գործերով պաշտպանությունը՝ որպես ձեռնարկատիրական գործունեություն, իրականացնում է միայն փաստաբանը:

Փաստաբանական գործունեություն չի համարվում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող և ի շահ գործատուի գործող անձանց կողմից ցույց տրվող իրավաբանական օգնությունը:

Սույն օրենքի գործողությունը չի տարածվում այն անձանց վրա, ովքեր փաստաբան չեն և օրենքով սահմանված կարգով իրականացնում են ներկայացուցչություն կամ քրեական գործերով պաշտպանություն՝ ոչ որպես ձեռնարկատիրական գործունեություն:

Հոդված 6. Փաստաբանական գործունեության վճարովիությունը

Փաստաբանն իրավունք ունի փոխհատուցում ստանալու իր ծառայությունների դիմաց:

Փաստաբանական գործունեության վճարի չափն ու վճարման կարգը որոշվում են փաստաբանի ու վստահորդի միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագրով:

Պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնությունը քրեական գործերով՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և նախատեսված դեպքերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և հետևյալ դեպքերում.

- 1) ալիմենտի գանձման վերաբերյալ գործերով.
- 2) խեղման կամ առողջությանն այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով:

Անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է փաստաբանների պալատը պետության հաշվին՝ սույն օրենքի 41-րդ և 42-րդ հոդվածներով սահմանված կարգով:

Անվճար իրավաբանական օգնություն կարող է ցույց տրվել նաև փաստաբանի նախաձեռնությամբ:

Գ Լ ՈՒ Խ 2

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 7. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (այսուհետ՝ փաստաբանների պալատ) փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող իրավաբանական անձ է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով: Փաստաբանների պալատն իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք է բերում օրենքով սահմանված կարգով գրանցվելու պահից:

Փաստաբանների պալատի խնդիրներն են՝

- 1) պայմաններ ստեղծել իր անդամների կողմից մասնագիտական գործունեություն իրականացնելու համար.
- 2) պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման

մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում.

- 3) կազմակերպել իր անդամների մասնագիտական ուսուցումը և վերապատրաստումը.
- 4) վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջների պահպանման նկատմամբ.
- 5) միջոցներ ձեռնարկել փաստաբանության հեղինակության բարձրացման ուղղությամբ.

6) ապահովել սույն օրենքով նախատեսված դեպքերում յուրաքանչյուրի համար հավասարապես մատչելի և արդյունավետ անվճար իրավաբանական օգնության իրականացումը:

Փաստաբանների պալատը կարող է համագործակցել այլ երկրների փաստաբանական կառույցների, միջազգային և այլ կազմակերպությունների հետ:

Հոդված 8. Փաստաբանների պալատի մարմինները

Փաստաբանների պալատի մարմիններն են՝

- 1) փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը.
- 2) փաստաբանների պալատի խորհուրդը.
- 3) փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը.
- 4) փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը:

Փաստաբանների պալատի մարմինների անդամներն այդ մարմիններում աշխատում են առանց վարձատրության, բացառությամբ փաստաբանների պալատի նախագահի:

Փաստաբանների պալատի մարմինների անդամներն այդ մարմիններում աշխատանքը կարող են համատեղել փաստաբանական գործունեության հետ:

Փաստաբանների պալատի անդամը կարող է ընտրվել փաստաբանների պալատի մեկ մարմնում:

Փաստաբանների պալատի մարմինների լիազորությունները, կազմավորման կարգը, գործունեության կարգը, խնդիրներն ու գործառնությունները սահմանվում են սույն օրենքով և փաստաբանների պալատի կանոնադրությամբ:

Հոդված 9. Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը

Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը փաստաբանների ընդհանուր հավաքն է, որն իրավասու է քննարկելու և լուծելու փաստաբանությանը վերաբերող և սույն օրենքից բխող հարցեր:

Փաստաբանների ընդհանուր ժողովը փաստաբանների պալատի բարձրագույն մարմինն է, որը՝

- 1) հաստատում է փաստաբանների պալատի կանոնադրությունը և փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, ինչպես նաև փոփոխություններ կամ լրացումներ է կատարում դրանցում.
- 2) ընտրում և հետ է կանչում փաստաբանների պալատի խորհրդի և փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամներին.
- 3) ընտրում և հետ է կանչում փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամներին.
- 4) ընտրում և հետ է կանչում փաստաբանների պալատի նախագահին.
- 5) լսում է փաստաբանների պալատի խորհրդի հաշվետվությունը՝ հաշվետու ժամանակահատվածում փաստաբանների պալատի խորհրդի գործունեության վերաբերյալ, ինչպես նաև հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի հաշվետվությունը՝ հաշվետու ժամանակահատվածում հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության վերաբերյալ.

- 6) լսում է աուդիտի եզրակացությունը.
- 7) *(կեսն ուժը կորցրել է 01.06.06 ՀՕ-105-Ն)*

8) իրականացնում է սույն օրենքով և փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը հրավիրվում է առնվազն երկու տարին մեկ՝ փաստաբանների պալատի նախագահի նախաձեռնությամբ: Փաստաբանների արտահերթ ընդհանուր ժողով կարող է հրավիրվել փաստաբանների պալատի անդամների մեկ երրորդի կամ փաստաբանների պալատի խորհրդի նախաձեռնությամբ:

Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովն իրավագոր է, եթե ժողովին ներկա է փաստաբանների պալատի անդամների կեսից ավելին: Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի աշխատանքները սկսվում են փաստաբանների գրանցմամբ: Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի աշխատանքները մեկ օրից ավելի տևելու դեպքում փաստաբանների գրանցումը կատարվում է յուրաքանչյուր օր:

Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անձանց ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի: Փաստաբանների պալատի կանոնադրությամբ կարող են նախատեսվել գաղտնի քվեարկության իրականացման այլ

դեպքեր:

Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի իրավասությունները չեն կարող փոխանցվել այլ մարմինների:

Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին մասնակցելու նպատակով փաստաբանների պալատի անդամը կարող է իր ձայնը լիազորել փաստաբանների պալատի մեկ այլ անդամի՝ փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով:

(9-րդ հոդվածը խմբ. 08.07.05 ՀՕ-141-Ն, փոփ. 01.06.06 ՀՕ-105-Ն)

Հոդված 10. Փաստաբանների պալատի խորհուրդը

Փաստաբանների պալատի խորհուրդը փաստաբանների պալատի գործադիր մարմինն է:

Փաստաբանների պալատի խորհրդի անդամն ընտրվում է փաստաբանների կազմից վարկանիշային կարգով գաղտնի քվեարկությամբ՝ երկու տարի ժամկետով, բացառությամբ փաստաբանների պալատի նախագահի: Փաստաբանների պալատի խորհուրդը կազմված է տասնմեկ անդամից և խորհրդի նախագահից:

Փաստաբանների պալատի խորհուրդը

1) կազմավորում է որակավորման հանձնաժողովը:

2) մշակում և փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում փաստաբանի վարքագծի կանոնագիրքը:

3) իրավասու պետական մարմիններ առաջարկություններ է ներկայացնում օրենքների և իրավական այլ ակտերի կատարելագործման ուղղությամբ:

4) կազմում և հաստատում է փաստաբանների պալատի տարեկան բյուջեն, ինչպես նաև կազմում և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում անվճար իրավաբանական օգնության տրամադրման փոխհատուցման ֆինանսական հայտերը:

5) կազմակերպում է փաստաբանների մասնագիտական ուսուցումը և վերապատրաստումը:

6) որոշում է ընդունում փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալուն հավակնող անձին (այսուհետ՝ հավակնորդ) փաստաբանական գործունեության արտոնագիր տրամադրելու վերաբերյալ՝ սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված կարգով:

7) որոշում է ընդունում փաստաբանի արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին՝ սույն օրենքի 36-րդ հոդվածով նախատեսված կարգով:

8) որոշում է ընդունում փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցնելու կամ վերականգնելու մասին՝ սույն օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված կարգով:

9) մշակում և հաստատում է փորձնակների փորձաշրջանը կազմակերպելու և անցկացնելու կարգը:

10) սահմանում է փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի ու հավակնորդի այլ վճարների չափերը, ինչպես նաև դրանք մուծելու կարգը:

11) հաստատում է փաստաբանների պալատի աշխատակազմի հաստիքացուցակը:

12) փաստաբանի նկատմամբ հարուցում է կարգապահական վարույթ, ինչպես նաև որոշում է ընդունում փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին:

13) իրականացնում է օրենքով և փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ: Փաստաբանների պալատի խորհրդի նիստերը հրավիրվում են փաստաբանների պալատի նախագահի կողմից՝ ըստ անհրաժեշտության, բայց տարեկան չորս անգամից ոչ պակաս: Փաստաբանների պալատի խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև պալատի խորհրդի անդամների մեկ երրորդի կամ փաստաբանների պալատի երեսուն անդամների նախաձեռնությամբ:

Փաստաբանների պալատի խորհրդի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա է անդամներից առնվազն յոթը:

Փաստաբանների պալատի խորհրդի նիստերին փաստաբանների պալատի խորհրդի անդամը քվեարկում է անձամբ:

Փաստաբանների պալատի խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա գտնվող անդամների

ձայների պարզ մեծամասնությամբ:

(10-րդ հոդվածը խմբ. 08.07.05 ՀՕ-141-Ն, փոփ. 01.06.06 ՀՕ-105-Ն)

Հոդված 11. Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը

Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարգապահական վարույթ իրականացնող մարմին է:

Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովն ընտրվում է փաստաբանների կազմից վարկանիշային կարգով փակ գաղտնի քվեարկությամբ՝ երկու տարի ժամկետով, ինն անդամի կազմով:

Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը

- 1) փաստաբանի նկատմամբ իրականացնում է կարգապահական վարույթ.
- 2) տալիս է եզրակացություն փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու վերաբերյալ՝ սույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերին համապատասխան.
- 3) տալիս է եզրակացություն փաստաբանի արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ:
 Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նախագահն ընտրվում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի կազմից:
 Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նիստերը հրավիրում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նախագահը:
 Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամների երկու երրորդից ավելին:
 Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
(11-րդ հոդվածը լրաց. 08.07.05 ՀՕ-141-Ն)

Հոդված 12. Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը

Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է որակավորման քննությունները կազմակերպելու և դրանց արդյունքներն ամփոփելու նպատակով:

Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է երկու տարի ժամկետով՝ ինն անդամի կազմով, ներկայացուցչության հետևյալ համամասնությամբ՝

- 1) փաստաբանների կազմից առնվազն հինգ տարվա փաստաբանական ստաժ ունեցող վարկանիշային կարգով՝ փակ գաղտնի քվեարկությամբ ընտրված վեց փաստաբան.
- 2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ.
- 3) Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայից մեկ գիտնական իրավաբան՝ այդ հաստատության ղեկավարի ներկայացմամբ.
- 4) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանից (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) մեկ դատավոր՝ վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացմամբ:

Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի նախագահն ընտրվում է որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամների կազմից:
 Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի նիստերը հրավիրում է որակավորման հանձնաժողովի նախագահը:
 Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է որակավորման հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը:
 Հավակնորդից որակավորման քննություններ ընդունելու վերաբերյալ որակավորման հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող որակավորման հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ անվանական քվեաթերթիկներով քվեարկության միջոցով: Քվեաթերթիկի ձևը հաստատում է փաստաբանների պալատի խորհուրդը: Որակավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը ստորագրվում է որակավորման հանձնաժողովի բոլոր անդամների կողմից՝ անկախ քվեարկության ժամանակ անդամներից յուրաքանչյուրի ունեցած դիրքորոշումից: Քվեաթերթիկները և հարցերին գրավոր պատասխանների (թեստավորման) տեքստերը կցվում են արձանագրությանը և երեք տարի ժամկետով պահվում են փաստաբանների պալատի արխիվում: Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի որոշումը հավակնորդին հայտարարվում է քվեարկությունից անմիջապես հետո:
(12-րդ հոդվածը լրաց. 08.07.05 ՀՕ-141-Ն)

Հոդված 13. Փաստաբանների պալատի նախագահը

Փաստաբանների պալատի նախագահը փաստաբանների պալատի գործադիր մարմնի բարձրագույն պաշտոնատար անձն է:

Փաստաբանների պալատի նախագահն ընտրվում է առնվազն յոթ տարվա փաստաբանական ստաժ ունեցող անդամների կազմից փակ գաղտնի քվեարկությամբ՝ չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ:

Փաստաբանների պալատի նախագահ ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է քվեարկության մասնակիցների (քվեաթերթիկ ստացածների) ձայների կեսից ավելին:

Եթե քվեարկվել է երկու կամ ավելի թեկնածու, և նրանցից որևէ մեկը չի ստացել անհրաժեշտ ձայներ, ապա անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առավել ձայներ ստացած երկու թեկնածուները: Հավասար ձայների դեպքում երկրորդ փուլին երկրորդ թեկնածուի մասնակցությունը որոշվում է վիճակահանությամբ: Երկրորդ փուլում ընտրված է համարվում առավել ձայներ ստացած թեկնածուն, իսկ ձայների հավասար լինելու

դեպքում անցկացվում է վիճակահանություն:

Այն դեպքում, երբ քվեարկվել է մեկ թեկնածու, նա համարվում է ընտրված, եթե ստացել է քվեարկության մասնակիցների ձայների կեսից ավելին:

Եթե փաստաբանների պալատի նախագահ չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, անցկացվում է նոր ընտրություն:

Փաստաբանների պալատի նախագահը՝

1) ներկայացնում է փաստաբանների պալատը.

2) ընդունում է որոշումներ փաստաբանների պալատի բնականոն գործունեությունն ապահովելուն առնչվող հարցերի վերաբերյալ.

3) պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին և մյուս աշխատողներին.

4) սահմանում է փաստաբանների պալատի աշխատակազմի աշխատողների ծառայողական պարտականությունների շրջանակը.

5) ընդգրկում է փաստաբանին փաստաբանների ցուցակում.

6) տրամադրում է փաստաբանի, փաստաբանի օգնականի և փաստաբանի փորձնակի վկայականներ.

7) իրականացնում է օրենքով և փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Փաստաբանների պալատի նախագահն իր լիազորություններն իրականացնելու համար ունի տեղակալ, որին փաստաբանների պալատի խորհրդի կազմից նշանակում է փաստաբանների պալատի նախագահը: Փաստաբանների պալատի նախագահի տեղակալը փոխարինում է փաստաբանների պալատի նախագահին նրա բացակայության ժամանակ:

Փաստաբանների պալատի նախագահն ի պաշտոնե փաստաբանների պալատի խորհրդի նախագահն է:

Փաստաբանների պալատի նախագահի աշխատանքի համատեղումը փաստաբանական գործունեության հետ չպետք է խոչընդոտի փաստաբանների պալատի նախագահի լիազորությունների իրականացմանը:

(13-րդ հոդվածը լրաց. 08.07.05 ՀՕ-141-Ն)

Հոդված 13¹. Վարկանիշային կարգով գաղտնի քվեարկության անցկացման կարգը

Քվեաթերթիկում յուրաքանչյուր թեկնածուի անուն-ազգանունից հետո գրվում են «կողմ եմ» բառերը՝ նշումի համար նախատեսված դատարկ քառանկյունով:

Քվեարկության մասնակիցը յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկելիս նշում է կատարում «կողմ եմ» բառերին համապատասխանող քառանկյան մեջ, իսկ դեմ քվեարկելիս՝ որևէ նշում չի կատարում:

Քվեարկության արդյունքներով ընտրված են համարվում առավել «կողմ» ձայներ ստացած թեկնածուները: Ձայների հավասարության դեպքում անցկացվում է վիճակահանություն

(13¹-րդ հոդվածը լրաց. 08.07.05 ՀՕ-141-Ն)

Հոդված 14. Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը

Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է փաստաբանների պալատի խորհրդի կողմից ընտրված անկախ ատուդիտը ոչ ուշ, քան երկու տարին մեկ:

Հոդված 15. Փաստաբանների պալատի գույքը

Փաստաբանների պալատի գույքը ձևավորվում է փաստաբանների անդամավճարներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցներից:

Հոդված 16. Փաստաբանների հասարակական միավորումները

Փաստաբաններն իրավունք ունեն ստեղծելու փաստաբանների հասարակական միավորումներ կամ լինելու փաստաբանների հասարակական միավորումների անդամ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Փաստաբանների հասարակական միավորումներն իրավունք չունեն իրականացնելու փաստաբանների պալատի կամ դրա մարմինների՝ սույն օրենքով նախատեսված լիազորությունները, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերով նախատեսված լիազորությունների:

Գ Լ ՈՒ Խ 3

ՓԱՍՏԱԲԱՆԸ ԵՎ ՆԸԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 17. Փաստաբանը

Փաստաբան է համարվում այն անձը, որը սույն օրենքով սահմանված կարգով ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, փաստաբանների պալատի անդամ է և տվել է երդում: Փաստաբանը համարվում է իրավական հարցերով անկախ խորհրդատու:

Փաստաբանն աջակցում է հասարակության մեջ իրավունքի գերակայության ամրապնդմանը, իրականացնում է օրինականության քարոզչություն՝ մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու և միջազգային հանրաճանաչ նորմերը ամրապնդելու ուղղությամբ:

Իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ փաստաբանը՝

- 1) խորհրդատվություն է տրամադրում իրավական հարցերով ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր.
- 2) կազմում է դիմումներ, բողոքներ, գանգատներ, միջնորդություններ և իրավական բնույթի այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց նախագծեր.
- 3) որպես վստահորդի ներկայացուցիչ մասնակցում է քաղաքացիական դատավարությանը, մասնակցում է գործի քննությանը Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում.
- 4) որպես ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցում է քրեական դատավարությանը և վարչական իրավախախտումների գործերով վարույթին.
- 5) որպես վստահորդի ներկայացուցիչ մասնակցում է գործերի քննությանը արբիտրաժային տրիբունալում կամ վեճեր լուծող այլ մարմիններում.
- 6) ներկայացնում է վստահորդի շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական միավորումներում և այլ կազմակերպություններում, օտարերկրյա պետությունների պետական իշխանության մարմիններում, դատարաններում, հետաքննության կամ նախաքննության մարմիններում, միջազգային դատական մարմիններում, օտարերկրյա պետությունների ոչ կառավարական մարմիններում, եթե այլ բան նախատեսված չէ տվյալ երկրի օրենսդրությամբ, միջազգային դատական մարմինների և այլ միջազգային կազմակերպությունների կանոնադրային փաստաթղթերով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Փաստաբանն իրավունք ունի ցույց տալու օրենքով չարգելված իրավաբանական այլ օգնություն: Քաղաքացիական և վարչական իրավախախտումների գործերով դատավարությունում, որպես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, կարող են հանդես գալ փաստաբանները, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործառույթներն իրականացնում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմում աշխատող անձինք, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Փաստաբանն իրականացնում է իր փորձնականության ուսուցումը:

Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:

Օտարերկրացի փաստաբանը Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեություն իրականացնում է սույն օրենքով, փաստաբանների պալատի կանոնադրությամբ և փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված կարգով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ: Օտարերկրացի փաստաբանը Հայաստանի Հանրապետությունում գործում է իր պետության համապատասխան փաստաբանական կառույցի տված արտոնագրի հիման վրա և պետք է հավատարմագրվի փաստաբանների պալատում:

Օտարերկրացի փաստաբանը չի կարող իրավաբանական օգնություն ցույց տալ Հայաստանի Հանրապետության պետական կամ ծառայողական գաղտնիքի հետ կապված հարցերով:

Օտարերկրացի փաստաբանը չի կարող ընտրվել փաստաբանների պալատի մարմիններում:

(17-րդ հոդվածը փոփ. 25.12.06 ՀՕ-63-Ն)

Հոդված 18. Փաստաբանի հիմնական իրավունքները

Քաղաքացիական և քրեական դատավարությունում, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթում որպես վստահորդի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի իրավունքները սահմանվում

են օրենքով:

Փաստաբանը մասնավորապես իրավունք ունի՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված կարգով ներկայացնելու կամ պաշտպանելու ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերը, ինչպես նաև ներկայացնելու վստահորդի շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ոչ պետական մարմիններում և կազմակերպություններում:

2) օրենքով սահմանված կարգով ձեռք բերելու և ներկայացնելու վստահորդի շահերից բխող ապացույցներ:

3) դիմելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստաթղթեր ստանալու պահանջով: Նշված մարմիններն ու կազմակերպությունները պարտավոր են օրենսդրությամբ սահմանված կարգով փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը կամ դրանց պատճենները:

4) համաձայնության դեպքում գրավոր հարցման ենթարկելու անձանց, ովքեր, ենթադրվում է, որ տիրապետում են գործին վերաբերող տեղեկատվությանը, որով փաստաբանն իրավաբանական օգնություն է ցույց տալիս:

5) պայմանագրային հիմունքներով մասնագետներ ներգրավելու՝ իրավաբանական օգնություն ցույց տալու հետ կապված այլ մասնագիտական գիտելիքներ պահանջող հարցեր պարզաբանելու համար:

Հոդված 19. Փաստաբանի հիմնական պարտականությունները

Փաստաբանը պարտավոր է՝

1) ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

3) չհրապարակել փաստաբանական գաղտնիքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4) մշտապես կատարելագործել իր գիտելիքները:

5) մուծել անդամավճարներ:

6) չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը:

7) կատարել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտականությունները:

(19-րդ հոդվածը լրաց. 26.05.08 ՀՕ-87-Ն)

Հոդված 20. Փաստաբանի հիմնական իրավունքների և պարտականությունների առանձնահատկությունները

Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած անձի հանձնարարությունն ընդունելու, եթե՝

1) այն ակնհայտ անօրինական բնույթ է կրում:

2) վստահորդի հետ կնքած պայմանագրի առարկայի շուրջ ունի ինքնուրույն շահ, որը տարբերվում է տվյալ անձի հետապնդած շահից:

Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ

1) առկա է հակասություն նույն հարցով իր կամ իր վստահորդների շահերի միջև:

2) տվյալ գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատող, փորձագետ, տուժող կամ վկա, ինչպես նաև եթե նա հանդիսացել է պաշտոնատար անձ, որի իրավասության մեջ էր մտնում տվյալ անձի շահերից բխող որոշման ընդունումը:

3) ազգակցական, անձնական կամ կախյալ հարաբերությունների մեջ է գտնվում այն պաշտոնատար անձի հետ, որը մասնակցել կամ մասնակցում է տվյալ անձի գործի քննությանը:

4) պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:

Փաստաբանն իրավունք չունի՝

1) հայտարարություններ անելու վստահորդի մեղավորության ապացուցված լինելու վերաբերյալ, եթե վերջինս ժխտում է դա:

2) հրապարակելու վստահորդի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ իրեն հայտնած տեղեկությունները՝ առանց վստահորդի համաձայնության:

Փաստաբանը պետք է դադարեցնի իրավաբանական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի անձանց, եթե նրանց

շահերի միջև առաջանում է հակասություն:

Փաստաբանն իրավունք ունի հրաժարվելու վստահորդի նկատմամբ իր ստանձնած պարտավորությունից միայն սույն օրենքով, ինչպես նաև վստահորդի հետ կնքված պայմանագրով նախատեսված դեպքերում:

Վստահորդն իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվելու փաստաբանի ծառայությունից՝ փոխհատուցելով նրա արդեն մատուցած ծառայության դիմաց:

Վստահորդի շահերը ներկայացնելուց հրաժարվելու դեպքում փաստաբանը պարտավոր է հրաժարվելու մասին ժամանակին տեղեկացնել վստահորդին, մինչև իր հեռանալը բավարար ժամանակ տրամադրել նրան նոր փաստաբան ընտրելու համար, վստահորդին հանձնել գործին վերաբերող իր մոտ եղած փաստաթղթերը:

Փաստաբանն ունի օրենքով սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ:

Հոդված 21. Փաստաբանի գործունեության երաշխիքները

Փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով, փաստաբանի վարքագծի կանոնագրքով և փաստաբանների պալատի կանոնադրությամբ:

Արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կուսակցությունների և հասարակական միավորումների, զանգվածային լրատվության միջոցների միջամտությունը փաստաբանական գործունեությանը:

Փաստաբանը պետք է ապահովվի իր վստահորդի հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու, խորհրդատվություն տրամադրելու հնարավորությամբ:

Փաստաբանը չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել օրենքով սահմանված պահանջներին համապատասխան իրականացրած ցանկացած գործողության, ներառյալ՝ իր մասնագիտական պարտականությունները բարեխիղճ կատարելիս դատարանում, հետաքննության, նախաքննության և այլ մարմիններում հայտնած կարծիքի և դիրքորոշման համար:

Հոդված 22. Փաստաբանի իրավական պաշտպանությունը

Փաստաբանը, նրա ընտանիքի անդամները և նրանց գույքը գտնվում են պետության պաշտպանության ներքո:

Պետական իրավասու մարմինները պարտավոր են ձեռնարկել փաստաբանի պաշտպանության համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված միջոցներ, եթե իր մասնագիտական պարտականությունների կատարման հետ կապված՝ նրան կամ նրա ընտանիքի անդամներին սպառնացել են ֆիզիկական բռնությամբ, գույքի ոչնչացմամբ կամ այլ անօրինական գործողություններով:

Փաստաբանին ձեռքակալելու կամ կալանավորելու դեպքում վարույթն իրականացնող մարմինն այդ մասին անհապաղ տեղեկացնում է փաստաբանների պալատի նախագահին:

Հոդված 23. Փաստաբանի օգնականը

Փաստաբանն իրավունք ունի ունենալու օգնական կամ օգնականներ: Փաստաբանի օգնական չի կարող լինել սույն օրենքի 33-րդ հոդվածում նշված անձը:

Փաստաբանի օգնականն իրավունք չունի զբաղվելու փաստաբանական գործունեությամբ:

Փաստաբանի օգնականն իրավունք չունի հրապարակելու փաստաբանական գաղտնիքը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվության: Փաստաբանի օգնականն աշխատանքի է ընդունվում այն կազմակերպության հետ կնքվող աշխատանքային պայմանագրով, որտեղ աշխատում է տվյալ փաստաբանը, կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող փաստաբանի հետ կնքվող աշխատանքային պայմանագրով:

Փաստաբանի օգնականն իր ինքնությունը հաստատում է փաստաբանի օգնականի վկայականով, որի ձևը և տրամադրման կարգը հաստատում է փաստաբանների պալատի խորհուրդը:

Հոդված 24. Փաստաբանի փորձնակը

Հինգ տարի և ավելի փաստաբանական ստաժ ունեցող փաստաբանն իրավունք ունենալու փորձնակ կամ փորձնակներ:

Փաստաբանի փորձնակ կարող է լինել բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձը, որը փաստաբանների պալատի կառույցներում, այն կազմակերպությունում, որտեղ աշխատում է տվյալ փաստաբանը, կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող փաստաբանի հետ աշխատանքային պայմանագիր կնքելով՝ անցնում է

փորձնակություն մեկից երկու տարի ժամանակով, բացառությամբ սույն օրենքի 33-րդ հոդվածում նշված անձանց:

Փորձնակություն անցնելու, ինչպես նաև փորձնակությունը դադարեցնելու կարգն ու պայմանները սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը:

Փաստաբանի փորձնակն իր գործունեությունն իրականացնում է փաստաբանի ղեկավարությամբ՝ կատարելով նրա փաստաբանական գործունեության հետ կապված առանձին հանձնարարություններ: Փաստաբանի փորձնակն իրավունք չունի ինքնուրույն զբաղվելու փաստաբանական գործունեությամբ: Փաստաբանի փորձնակն իրավունք չունի հրապարակելու փաստաբանական գաղտնիքը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվության: Փաստաբանի փորձնակն աշխատանքի է ընդունվում այն կազմակերպությունում, որտեղ աշխատում է տվյալ փաստաբանը, կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող փաստաբանի հետ աշխատանքային պայմանագիր կնքելով:

Փաստաբանի փորձնակն իր ինքնությունը հաստատում է փաստաբանի փորձնակի վկայականով, որի ձևը և տրամադրման կարգը հաստատում է փաստաբանների պալատի խորհուրդը:

Հոդված 25. Փաստաբանական գաղտնիքը

Փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկությունը, որը վստահորդը փոխանցել է փաստաբանին, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները, որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն, և որոնք հայտնի չեն հանրությանը:

Արգելվում է փաստաբանին որպես վկա հարցաքննել այն հանգամանքների մասին, որոնք նրան հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով իրեն դիմելու կամ իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ:

Փաստաբանը հրապարակում է փաստաբանական գաղտնիքը, եթե՝

- 1) առկա է վստահորդի համաձայնությունը.
- 2) դա անհրաժեշտ է նրա և վստահորդի միջև ծագած դատական վեճում պահանջները հիմնավորելու կամ իր պաշտպանության համար.

3) առկա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվություն: Փաստաբանական գաղտնիքի պահպանման պարտականությունը չի սահմանափակվում ժամանակի մեջ:

Հոդված 26. Փաստաբանների գործունեության կազմակերպական-իրավական ձևերը

Փաստաբանն իր գործունեությունը կազմակերպելու համար կարող է ընտրել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կազմակերպական-իրավական ցանկացած ձև:

Հոդված 27. Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը

Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը սահմանում է փաստաբանի վարքագծի կանոնները և փաստաբանական էթիկայի սկզբունքները:

Գ Լ ՈՒ Խ 4

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳՐՈՒՄԸ

Հոդված 28. Փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար ներկայացվող պահանջները

Փաստաբանական գործունեության արտոնագիր կարող է ստանալ այն անձը, որը՝

- 1) ունի բարձրագույն իրավաբանական կրթություն կամ իրավաբանի մասնագիտությամբ գիտական աստիճան և իրավաբանի մասնագիտությամբ առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ.
- 2) հանձնել է որակավորման քննություն և ստացել համապատասխան վկայագիր:

Փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար հավակնորդը որակավորման քննություն է հանձնում փաստաբանների պալատի խորհրդի սահմանած ծրագրով: Քննությունն ընդունելու և հանձնելու կարգը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը:

Փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար հավակնորդը որակավորման հանձնաժողով է ներկայացնում դիմում, անձը հաստատող փաստաթղթի պատճենը, ինքնակենսագրական տվյալներ պարունակող թերթիկ, աշխատանքային գրքույկի պատճենը կամ իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքային ստաժը հաստատող այլ փաստաթուղթ, Բարձրագույն իրավաբանական կրթությունը կամ իրավաբանի մասնագիտությամբ գիտական աստիճանի վկայությունը հաստատող փաստաթղթի պատճենը, ինչպես նաև փաստաբանության մասին օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

Որակավորման հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում երկու ամսվա ընթացքում կազմակերպում է հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի և տվյալների հավաստիության ստուգում:

Որակավորման քննությունը բաղկացած է հարցերին գրավոր պատասխաններից՝ թեստավորումից և բանավոր հարցազրույցից: Որակավորման քննության պահանջները, քննական առարկաների ցանկը, գնահատման չափանիշները սահմանում է որակավորման հանձնաժողովը:

Որակավորման քննության արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով:

Որակավորման քննությունը չհանձնած հավակնորդին թույլատրվում է այն հանձնել մեկ տարի անց: Քննություն հանձնելու փորձերի թիվն անսահմանափակ է:

Քննություններն անցկացվում են առնվազն տարին մեկ անգամ:

Փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար անհրաժեշտ իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքային ստաժի մեջ մտնում է աշխատանքը կամ գործունեությունը՝

- 1) որպես դատավոր կամ դատախազ.
- 2) ոչ պետական, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ կազմակերպության բարձրագույն իրավաբանական կրթություն պահանջող պաշտոնում.
- 3) որպես փաստաբան կամ փաստաբանի փորձնակ.
- 4) որպես նոտար կամ քննիչ.
- 5) որպես իրավունքի բնագավառի դասախոս միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական և հետբուհական մասնագիտական կրթական հաստատություններում:

Առանց որակավորման քննություն հանձնելու և համապատասխան վկայագիր ստանալու՝ փաստաբանական գործունեության արտոնագիր կարող է ստանալ այն անձը, որն ունի փաստաբանի, դատավորի առնվազն տասնհինգ տարվա աշխատանքային ստաժ:

(28-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-105-Ն)

Հոդված 29. Փաստաբանական գործունեության արտոնագիր տրամադրելու կարգը

Փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար հավակնորդը փաստաբանների պալատ է ներկայացնում դիմում՝ փաստաբանների պալատին անդամագրվելու խնդրանքով, որին կցվում է որակավորման հանձնաժողովի տված վկայագրի պատճենը:

Հավակնորդի դիմումը քննարկում և դրա վերաբերյալ մեկամսյա ժամկետում որոշում է կայացնում փաստաբանների պալատի խորհուրդը:

Արգելվում է հավակնորդների նկատմամբ խտրականությունը՝ հավակնորդի ազգության, քաղաքացիության, ռասայի, սեռի, լեզվի, դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների, սոցիալական ծագման, գույքային կամ այլ դրության հիմքով:

Դիմումը կարող է մերժվել, եթե չեն ապահովվել սույն օրենքի 28-րդ և 33-րդ հոդվածներով նախատեսված պահանջները:

Դիմումի մերժումը մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել դատական կարգով:

Դիմումը մերժվելու դեպքում հավակնորդը նոր դիմում կարող է ներկայացնել մերժելու մասին որոշումն ընդունելու օրվանից մեկ տարի հետո:

Փաստաբանների պալատին անդամագրված անձը հնգօրյա ժամկետում ստանում է փաստաբանների պալատի կնիքով և նախագահի ստորագրությամբ վավերացված արտոնագիր:

Արտոնագիրը տրվում է անժամկետ՝ առանց տարիքային սահմանափակման:

Հոդված 29¹. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանը

(29¹-րդ հոդվածն ուժը կորցրել է 26.12.08 ՀՕ-236-Ն)

Հոդված 30. Հատուկ արտոնագիրը և այն տրամադրելու կարգը

(30-րդ հոդվածն ուժը կորցրել է 01.06.06 ՀՕ-105-Ն)

Հոդված 31. Հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի գրանցումը վճռաբեկ դատարանում

(31-րդ հոդվածն ուժը կորցրել է 01.06.06 ՀՕ-105-Ն)

Հոդված 32. Փաստաբանի երդումը

Առաջին անգամ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալիս փաստաբանը փաստաբանների պալատի խորհրդի առջև հանդիսավոր պայմաններում երդում է տալիս հետևյալ բովանդակությամբ.

«Հանդիսավոր երդվում եմ ազնիվ և բարեխիղճ կատարել փաստաբանի պարտականությունները, պահպանել փաստաբանական գաղտնիքը, պաշտպանել վստահողների իրավունքները, ազատությունները և շահերը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և փաստաբանի վարքագծի կանոնագրքով»:

Երդումը տրվում է անհատական կարգով՝ յուրաքանչյուր փաստաբանի կողմից երդման տեքստն ընթերցվելու միջոցով:

Փաստաբանը ստորագրում է երդման տեքստը:

Հոդված 33. Փաստաբանական գործունեության սահմանափակումները

Անձը չի կարող լինել փաստաբան, եթե նա՝

- 1) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- 2) դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:

Հոդված 34. Փաստաբանների ցուցակը և դրանում ընդգրկվելը

Հասարակության համար փաստաբանական գործունեության մատչելիությունն ապահովելու նպատակով փաստաբանների պալատի խորհուրդը վարում և առնվազն տարին երկու անգամ հրապարակում է փաստաբանների ցուցակ:

Փաստաբանների ցուցակը ներառում է փաստաբանի անունը և ազգանունը, փաստաբանի հետ կապ հաստատելու հնարավոր միջոցները, փաստաբանի մասնագիտացումը, ինչպես նաև փաստաբանի ցանկությամբ այլ տեղեկատվություն, որը մանրամասն պետք է նշված լինի փաստաբանի դիմումում:

Փաստաբանների պալատի նախագահը փաստաբանի գործունեության արտոնագիր ունեցող փաստաբանի կամ փաստաբանական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող օտարերկրացի փաստաբանի դիմումը ստանալու օրվանից հետո՝ տասնչորս օրվա ընթացքում, ընդգրկում է նրան փաստաբանների ցուցակում:

Փաստաբանն օրենքով սահմանված պատասխանատվություն է կրում փաստաբանների ցուցակում հրապարակված կեղծ տեղեկատվության համար:

Հոդված 35. Փաստաբանների ցուցակից հանելը

Փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ փաստաբանը հանվում է փաստաբանների ցուցակից, եթե՝

- 1) նա գրավոր դիմում է փաստաբանների ցուցակից իր անունը հանելու վերաբերյալ.
- 2) դադարեցվում է նրա արտոնագրի գործողությունը սույն օրենքի 36-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում.
- 3) դադարեցվել է օտարերկրացի փաստաբանի փաստաբանական գործունեության իրավունքն իր քաղաքացիության երկրում:

Հոդված 36. Արտոնագրի գործողության դադարեցումը

Փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) նա գրավոր դիմում է փաստաբանների պալատի նախագահին՝ արտոնագրի գործողությունը դադարեցնելու համար.

2) նա արտոնագիր է ստացել օրենքի պահանջների խախտմամբ.

3) առկա են սույն օրենքի 33-րդ հոդվածով նախատեսված հանգամանքներ.

4) նա մեկ տարվա ընթացքում երեք կամ ավելի անգամ ենթարկվել է կարգապահական տույժի.

5) նա մահացել է, կամ ուժի մեջ է մտել նրան մահացած ճանաչելու մասին դատարանի որոշումը.

6) նա որակավորման հանձնաժողով է ներկայացրել կեղծ տվյալներ.

7) լրացել է արտոնագրի գործողության կասեցման՝ սույն օրենքի 38-րդ հոդվածով սահմանված ժամկետը:

Արտոնագրի գործողությունը դադարեցնում է փաստաբանների պալատի խորհուրդը՝ այն ուժը կորցրած ճանաչելով: Փաստաբանների պալատի խորհուրդը սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում արտոնագիրն ուժը կորցրած է ճանաչում փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը կարող է մեկամսյա ժամկետում բողոքարկվել դատական կարգով:

Փաստաբանն իրավունք ունի դիմելու նոր արտոնագիր ստանալու համար արտոնագրի գործողությունը դադարեցնելուց երկու տարի անց:

Օտարերկրացի փաստաբանը չի կարող փաստաբանական գործունեություն իրականացնել Հայաստանի Հանրապետությունում, եթե դադարեցվել է նրա փաստաբանական գործունեության իրավունքն այն երկրում, որտեղ նա ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու համապատասխան թույլտվություն:

Հոդված 37. Հատուկ արտոնագրի գործողության դադարեցումը

(37-րդ հոդվածն ուժը կորցրել է 01.06.06 ՀՕ-105-Ն)

Հոդված 38. Արտոնագրի գործողության կասեցումը

(վերնագիրը փոփ. 01.06.06 ՀՕ-105-Ն)

Արտոնագրի գործողությունը կասեցվում է մինչև հինգ տարի ժամկետով, եթե փաստաբանը՝

1) ընտրվել է պետական ընտրովի մարմիններում կամ համայնքի ղեկավարի պաշտոնում՝ իր լիազորությունների ժամկետով.

2) գորակոչվել է ժամկետային զինվորական ծառայության մինչև ծառայության ժամկետի լրանալը.

3) մեկ տարուց ավելի ժամանակով առողջական վիճակի պատճառով ի վիճակի չէ կատարելու իր մասնագիտական պարտականությունները, եթե առկա են առողջական վիճակը հավաստող համապատասխան փաստաթղթեր.

4) անցել է պետական ծառայության՝ պետական ծառայության մեջ գտնվելու ժամկետով.

5) օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող.

6) մեղադրվում է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, որը կապված է նրա փաստաբանական գործունեության հետ:

Արտոնագրի գործողությունը կասեցվում է օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Դատարանի կողմից փաստաբանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելու դեպքում փաստաբանների պալատի խորհուրդը կարող է կասեցնել տվյալ փաստաբանի արտոնագրի գործողությունը:

Փաստաբանի արտոնագրի գործողության կասեցումը հանգեցնում է տվյալ փաստաբանի նկատմամբ սույն օրենքով նախատեսված երաշխիքների կասեցման:

Արտոնագրի գործողությունը կասեցնում է փաստաբանների պալատի խորհուրդը:

Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության մասին փաստաբանը պարտավոր է տասնօրյա ժամկետում տեղյակ պահել փաստաբանների պալատի նախագահին:

Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը վերանալուց հետո փաստաբանի արտոնագրի գործողությունը վերականգնվում է փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ՝ այն փաստաբանի դիմումի հիման վրա, որի արտոնագրի գործողությունը կասեցվել էր:

Փաստաբանի արտոնագրի գործողությունը վերականգնելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

(մասն ուժը կորցրել է 01.06.06 ՀՕ-105-Ն)

(38-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-105-Ն)

ՓԱՍՏԱՐԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 39. Փաստաբանի կարգապահական պատասխանատվությունը

Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնադրի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները խախտելու, իր մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Կարգապահական վարույթ հարուցվում է փաստաբանների պալատ ստացված գրավոր հաղորդումների կամ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա: Անստորագիր և անհասցե հաղորդումները ստուգման ենթակա չեն:

Փաստաբանն իրավունք ունի մասնակցելու իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթին, ունենալու պաշտպան, ծանոթանալու կարգապահական վարույթում առկա նյութերին, ներկայացնելու ապացույցներ, կանչելու վկաներ, տալու հարցեր և հարուցելու միջնորդություններ:

Կարգապահական վարույթ հարուցվում է կարգապահական խախտման հատկանիշների հայտնաբերման դեպքում դրանց վերաբերյալ ստացված հայտարարության կամ հաղորդման օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում:

Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը հաղորդվում է փաստաբանին:

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ հարուցված վարույթը ենթակա է կարճման, եթե խախտումը հայտնաբերելու օրվանից անցել է վեց ամիս:

Եթե փաստաբանի նկատմամբ հարուցվել է քրեական գործ, կամ իրականացվում է քրեական հետապնդում, ապա քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում, եթե խախտողի արարքում առկա են կարգապահական խախտման հատկանիշներ, փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումն ընդունելու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում:

Կարգապահական վարույթի քննությունը պետք է ավարտվի հարուցման օրվանից ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում, ներառյալ՝ որոշումն ընդունելու համար անհրաժեշտ ժամանակը:

Կարգապահական վարույթի արդյունքները հրապարակում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը:

Հոդված 40. Փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի տեսակները

Կարգապահական խախտման համար մեղավոր ճանաչված փաստաբանի նկատմամբ կարող է նշանակվել հետևյալ կարգապահական տույժերից մեկը.

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) տուգանք:

Տուգանքի չափերը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը, որը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը: Տուգանքը վճարվում է փաստաբանների պալատին:

Կարգապահական տույժեր նշանակելիս հաշվի են առնվում կարգապահական խախտում կատարողի անձը, արարքի ծանրությունը և կրկնակիությունը, առաջացած հետևանքները և պատճառված վնասի չափը:

Կարգապահական տույժի նշանակումը փաստաբանը կարող է բողոքարկել դատական կարգով՝ տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում:

Կարգապահական տույժն ուժի մեջ է նկատողության դեպքում կարգապահական տույժ նշանակելու մասին որոշում ընդունելու պահից՝ երեք ամիս ժամկետով, խիստ նկատողության դեպքում՝ վեց ամիս ժամկետով, տուգանքի դեպքում՝ ինն ամիս ժամկետով: Կարգապահական տույժերի ուժի մեջ լինելու համար սահմանված ժամկետները լրանալու դեպքում փաստաբանը համարվում է տույժ չունեցող:

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ

Հոդված 41. Հանրային պաշտպանությունը

Հանրային պաշտպանություն է համարվում սույն օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված գործերով տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը:

Հոդված 42. Հանրային պաշտպանի գրասենյակը

Հանրային պաշտպանությունն իրականացվում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով:
Հանրային պաշտպանի գրասենյակը փաստաբանների պալատի կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմված է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարից, հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի երկու օգնականներից և հանրային պաշտպաններից:

Հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող փաստաբանների թվաքանակը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորման սահմաններում:

(42-րդ հոդվածը լրաց. 25.12.06 ՀՕ-33-Ն)

Հոդված 43. Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին ընտրում է փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը՝ առնվազն տասը տարվա փաստաբանական ստաժ ունեցող անդամների կազմից փակ գաղտնի քվեարկությամբ՝ չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ:

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարն ընտրվում է փաստաբանների պալատի նախագահի ընտրության՝ սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը՝

- 1) ներկայացնում է հանրային պաշտպանի գրասենյակը.
- 2) կազմակերպում է սույն օրենքով նախատեսված դեպքերում յուրաքանչյուրի համար հավասարապես մատչելի և արդյունավետ իրավաբանական օգնության իրականացումը.
- 3) կատարում է աշխատանքի բաժանում հանրային պաշտպանների միջև.
- 4) ընդունում է որոշումներ հանրային պաշտպանի գրասենյակի բնականոն գործունեությունն ապահովելու ուղղությամբ.

5) քրեական վարույթն իրականացնող մարմնի դիմումի հիման վրա կամ սույն օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված դեպքերում քաղաքացու դիմումի հիման վրա որոշում է կայացնում հանրային պաշտպանություն իրականացնելու մասին դիմումը բավարարելու և գործը հանրային պաշտպանին հանձնելու մասին կամ հանրային պաշտպանություն իրականացնելու դիմումը մերժելու մասին, երբ այն նախատեսված չէ սույն օրենքի 6-րդ հոդվածով.

6) հսկողություն է իրականացնում հանրային պաշտպանների կողմից իրավաբանական օգնություն իրականացնելու որակի և ժամկետների նկատմամբ.

7) միջնորդություն է ներկայացնում հանրային պաշտպանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է փաստաբանների պալատի խորհրդի նիստերին:

(մասն ուժը կորցրել է 25.12.06 ՀՕ-33-Ն)

(43-րդ հոդվածը խմբ. 08.07.05 ՀՕ-141-Ն, փոփ. 25.12.06 ՀՕ-33-Ն)

Հոդված 44. Հանրային պաշտպանը

Հանրային պաշտպան է համարվում հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող փաստաբանը, որը գործում է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի ներկայացմամբ՝ պալատի նախագահի հետ կնքած աշխատանքային պայմանագրի հիման վրա:

Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով կարող է սահմանվել մրցույթ՝ փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով:

Հոդված 45. Հանրային պաշտպանի գրասենյակի ֆինանսավորումը, հանրային պաշտպանի գործունեության ապահովման հետ կապված ծախսերի փոխհատուցումը

(վերնագիրը խմբ. 25.12.06 ՀՕ-33-Ն)

Հանրային պաշտպանների գրասենյակի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին, որը պետք է ապահովի հանրային պաշտպանների գրասենյակի բնականոն գործունեությունը:

Փաստաբանների պալատի նախագահը հանրային պաշտպանների գրասենյակի ղեկավարի համաձայնությամբ օրենքով սահմանված ժամկետում հանրային պաշտպանների գրասենյակի ծախսերի նախահաշիվը (բյուջետային հայտը) ներկայացնում է կառավարություն՝ պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

Հանրային պաշտպանների գրասենյակի բյուջետային հայտը կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացվում է Ազգային ժողով: Կառավարությունը Ազգային ժողով և փաստաբանների պալատ է ներկայացնում բյուջետային հայտի վերաբերյալ առարկության հիմնավորումը:

Հանրային պաշտպանի գրասենյակին հատկացվող ֆինանսական միջոցները չեն կարող ծախսվել այլ նպատակներով:

Հանրային պաշտպանի գրասենյակը կարող է լրացուցիչ միջոցներ ներգրավել օրենքով չարգելված աղբյուրներից, որոնք կարող են ծախսվել գրասենյակի գործունեության բարելավման, ինչպես նաև հանրային պաշտպանների գործունեության արդյունավետության նպատակով դրամական խրախուսման համար:

Հանրային պաշտպանի գրասենյակի դրամական միջոցները տնօրինում է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը:

Հանրային պաշտպանների գործունեության ապահովման հետ կապված ծախսերը փոխհատուցվում են պետական բյուջեից, որոնք ներառում են հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափը և հանրային պաշտպանների գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսեր:

Հանրային պաշտպանի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է Երևան քաղաքի համայնքի դատախազի համար օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափին հավասար գումարի չափով: Անհրաժեշտության դեպքում հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը կարող է ժամավճարային դրույքաչափեր նախատեսող աշխատանքային պայմանագրեր կնքել հանրային պաշտպանի գրասենյակում չընդգրկված փաստաբանների հետ, որի դեպքում փոխհատուցվող գումարի չափը սահմանվում է Երևան քաղաքի համայնքի դատախազի աշխատանքային մեկ ժամի վարձատրության չափին համարժեք:

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարն իր գործունեության համար ստանում է փոխհատուցում՝ հանրային պաշտպանի պաշտոնային դրույքաչափի քսանհինգ տոկոսով ավելի գումարի չափով:

Հանրային պաշտպանների գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսերի փոխհատուցման գումարը հաշվարկվում է հանրային պաշտպանների աշխատանքի վարձատրության համար նախատեսված գումարի երեսուն տոկոսի չափով՝ անկախ հանրային պաշտպանների կողմից կատարված փաստացի ծախսերից:

(45-րդ հոդվածը խմբ. 25.12.06 ՀՕ-33-Ն)

Գ Լ ՈՒ Խ 8

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 46. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Սույն օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի գործողության մեջ մտնելը չի կարող հանգեցնել հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող անձի աշխատավարձի նվազեցման:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Փաստաբանական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 18-ի ՀՕ-234 օրենքը:

(46-րդ հոդվածը լրաց. 25.12.06 ՀՕ-33-Ն)

Հոդված 47. Փաստաբանների պալատի կազմավորումը

Փաստաբանների պալատը համարվում է Հայաստանի Հանրապետությունում գործող փաստաբանական միությունների իրավահաջորդը:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետությունում գործող փաստաբանական մյուս միությունների լիազորությունները պահպանվում են մինչև փաստաբանների պալատի կազմավորումը:

Փաստաբանների պալատը կազմավորվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամյա ժամկետում, Հայաստանի Հանրապետությունում գործող փաստաբանական միությունների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածով սահմանված կարգով վերակազմակերպմամբ:

Փաստաբանների պալատի հիմնադիր ընդհանուր ժողովը հրավիրում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, որը ժողովը վարում է մինչև փաստաբանների պալատի նախագահի ընտրվելը:

Փաստաբանների պալատի հիմնադիր ընդհանուր ժողովն իրավասու է սկսելու աշխատանքները գործող փաստաբանների միություններում ընդգրկված փաստաբանների ընդհանուր թվի կեսի առկայության դեպքում:

(47-րդ հոդվածը խմբ., փոփ. 08.07.05 ՀՕ-141-Ն)

Հոդված 48. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը արտոնագիր ստացած փաստաբանների և ստաժորների իրավական վիճակը

Հայաստանի Հանրապետությունում գործող փաստաբանական միությունները համարվում են վերակազմակերպված օրենքով սահմանված կարգով գրանցվելու պահից:

Փաստաբանների պալատը Հայաստանի Հանրապետությունում գործող փաստաբանական միությունների անդամ փաստաբանների արտոնագրերը փոխարինում է փաստաբանների պալատի արտոնագրերով: Հայաստանի Հանրապետությունում գործող փաստաբանական միությունների տրամադրած արտոնագրերն ուժի մեջ են փաստաբանների պալատի գրանցման պահից եռամսյա ժամկետում:

Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Փաստաբանական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գործողության ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում դատական ներկայացուցչությունը որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացրած և սույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները բավարարող անձինք սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, կարող են ստանալ փաստաբանական գործունեության արտոնագրեր՝ առանց դրակալորման քննություն հանձնելու և համապատասխան վկայագիր ստանալու՝ ներկայացնելով դատական ներկայացուցչությունը որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու փաստը հաստատող համապատասխան փաստաթղթեր, բացառությամբ այն անձանց, ովքեր ունեցել են փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, և դադարեցվել է դրա գործողությունը:

Հայաստանի Հանրապետությունում գործող փաստաբանական միությունների ստաժորները ճանաչվում են փաստաբանների պալատի փորձնակներ:

(48-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-105-Ն)

Հոդված 49. Արբիտրաժային տրիբունալում և մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը այլ դատարանում դատական ներկայացուցչություն իրականացնելու լիազորագիր ստացած անձանց իրավական վիճակը

(վերնագիրը փոփ. 25.12.06 ՀՕ-63-Ն)

Սույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանափակումը չի տարածվում այն անձանց վրա, ովքեր ստացել են լիազորագիր՝ արբիտրաժային տրիբունալում կամ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը՝ այլ դատարանում դատական ներկայացուցչություն իրականացնելու համար:

(49-րդ հոդվածը փոփ. 25.12.06 ՀՕ-63-Ն)

**Հայաստանի Հանրապետության
Նախագահ**

Ռ. Քոչարյան

2005 թ. հունվարի 13
Երևան
ՀՕ-29-Ն